

ՄԱՍԻՍ

Շ Ա Ւ Ա Ր Ա Ր Ե Ր Թ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական

52^{րդ} ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 13

29 ՄԱՐՏ 1903

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ՄԱՍԻՍ Շաբաթաբերքի տարեկան բաժանորդագինն է Կ. Պոլսոյ համար ֆառսուն դր. եւ գաւառներուն համար յիսուն դր., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Ֆրանկ կամ 5 բուլլի: Թղթատարական ծախքը տարեկան վճարելի է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրատարակ կ'ելլէ ամեն շաբաթ առտու: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած են, պէտք է իրենց իմացնեն տարեկան: Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առարկութիւնները չեն տրուիր:

Անտարակուսած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշտիկ պայմաններով:

Ձեռն-Բէ Կը ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ԲԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

در عایدہ غلطادہ (ماسيس) غرضتہ سى اداره سى

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Դալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

ՀԻՒՆԳՈՒԹԻՈՒՆԷ ՎԵՐՋԸ՝ ԶՕՐՈՒԹԻՈՒՆ

Նոր տենդեր և երկայն հիւանդութիւններ և անհանգստութիւններ սրունք մարմինը տկարացուցած և բնդհանուր անզօրութեան մէջ ձգած են, ի հարկէ մարդս զօրացուցիչ բանի մը կարօտ է սր լինքը շուտմը կատարեալ առողջութեան հասցնել:



SCOTT'S EMULSION

աշխարհիս մէջ առաջին կարգի զօրացուցիչ դեղ մըն է և իրեն հաւատարմ չեկայ: Ասիկայ թէ անործակ կուտայ և թէ մարտողութիւնը կը շտապէ. Մարմինը կը զարգացնէ և նոր հարուստ արիւն կուտայ, կենսաղութիւնը կը վերականգնէ և հիւանդութեան դիմադրելու համար բնդհանուր դրութեան զօրութիւն կուտայ: Ընդօթի Բաղադրութիւնը թէ կերակուր և թէ դեղ է. և տկարացած դրութեան մը կարօտ եղած միւս և զօրութիւնը առատագէտ կը մատակարարէ. և ասոր անհամար օգտակար գործողութիւնները ստուգելու զարմանայի են: Անտարակիս մեծ վտանքի մէջ գրութիւնը երբ միւս և զաւալ կը կորսնցնէ և հետեապէս շուտմը այնչափ կը տկարանայ որ հիւանդութիւններու դիւրաւ զոհ կ'ըլլայ:

ԸՍԳՕԹԻ ԻՆՂԸԹՐՈՒԹԻՈՒՆ

Ըրոյր կերակուրներու զօրութիւնը կը պարունակէ, սլոյս վատնու մը կը դադրեցնէ և առողջատես միւս կը կազմէ: Ընդ միշտ վարդագոյն փաթեթի մը մէջ և վրան այս պատկերով կը գտնուի:

Շիշուր վրայ ասոր ուշադրութիւն ընել պէտք է:

25

Բոլոր գեղարդները և գեղարդները ին ծախել:

ԱՊՍՈՒԿ ՎԱՃԱՌՈՒՄ

Եթէ կուզէք ամէն տեսակ դոհարեղէններ ունենալ, աժան ու ճաշակաւոր, թէ՛ արեւելեան եւ թէ՛ եւրոպական ճաշակով պատրաստուած, ժամացոյցներ, արծաթեայ դաւադաններ եւայլն գիմեցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շուկան, Մեծ-փողոց, թիւ 13

ՎԵՐՋԸ՝
ՄԱՐԿԱՆ



ՎԵՐՋԸ՝
ԳԻՆ

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար 100ին 5 մասնավճար: Կանխիկ գնողին համար հարիւրին 5 զեղչ: Գործածուած դոհարեղէնները եթէ վնասուած չեն՝ 100ին 10 զեղչով եւ կ'առնուին. իսկ ապառիկ գնողներէն՝ 100ին 15 զեղչով:

ԱՄՐԱՆ ԱՌԹԻԻ

Կըսեն թէ ամառը որ եւ է սառուցեալ ըմպելի կը զովացնէ, իսկ քիչ կը քրտնցնէ մարդը:

Փորձեցէ՛ք եւ պիտի տեսնէք թէ այդպէս ըսողները կը սխալին:

Գնեցէ՛ք-Վ. ԵՍԿՐՈՒԵԱՆ եւ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ՝ Չինաստանէն, Հնդկաստանէն, Ճափանէն եւ Սէյլանէն ուղղակի բերել տուած բարձր, հոսաւեհ եւ առողջարար թէյերէն, համոզուեցէ՛ք մեր ըսածին եւ զովացէ՛ք ամառուան տաք օրերուն:

Միշտ ուշադրութիւն մեր վաճառանիչին:

Վ. Պոլիս, Պահէճ Գափու, ձէլալ պէյ խան, թիւ 10:

Մասնաճիւղեր Թուրքիոյ Գլխաւոր քաղաքներուն մէջ, նոյնպէս Եգիպտոս:



Յ. ՎԵՐՋԸ՝ ԶՕՐՈՒԹԻՈՒՆ չորս տետրալիներու մէջ ամբողջութեամբ Գրալարժուքեանոր դրութիւնը հրատարակուեցաւ: Դիմել բոլոր հայ գրալարժառուց:—Գին հատին 20 փարայ:

ՄԱՍԻՆ

52^{րդ} ՏԱՌԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 13

29 ՄԱՐՏ 1908

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ազնուական լեզուն . Գ.Ր. ՄԱԼԽԱՍ :—Քրոջս յիշատակին (Բանաստեղծութիւն) ՎԱՀԱՆ ՄԱԼԽԱՆ :— Ծաղկազարդի մտածումներ . ԵՂԻՇԷ ՎՐԴ :— Ուրուագիծներ .— Վայրկենական . «Տիգրանի Եկեղեցեան» . ԳԱՄԷՐ .— Մեծ համբաւ՝ փոքր հոգի (Նորավիպ) ՏՕՄԻՆՅԱՆ :— Վարդը (Բանաստեղծութիւն) ԱՌՄԱՆ ՍԻԼՎԷՍԻՐ . քարզմ . ՄԱՌԻ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ :— «Թրքոսումներ»ը՝ գրաբար :— Խմբագրական Նօթեր :— Դերման գրականութիւն :

ԱԶՆՈՒԱԿԱՆ ԼԵԶՈՒՆ

Ազնուական լեզուն մէկ կողմէն, փողոցի լեզուն միւս կողմէն, իրարու դէմ անդադար կռուած են քաղաքակրթեալ ամէն ազգերուն մէջ : Այս երեւոյթը տիեզերական ըսուելու չափ ընդհանուր է, և իր անայլալուծեամբը՝ կրնայ դասուիլ լեզուական օրէնքներուն անխախտ մասին կարգը :

Ինչպէս Եւրոպայի ընկերային կեանքի մէջ կը դիտուի, ազնուականը կը յենու կղերականին վրայ, և կղերականը կ'ապրի աղնուականով : Ժողովուրդը չունի, ընդհանրապէս, այսքան բարձր յաւակնութիւններ և կ'ապաւինի իր անհատական ճիգերուն գումարին վրայ, կ'ապրի իր արհեստաւորներովը, վաճառականներովը, արուեստագործներովը՝ որոնք կը կազմեն առանձին միջավայր մը, բոլորովին անկախ ազնուականին ազդեցութենէն, ինքնին կը հոգան իրենց ամէն պէտքերը, նիւթական, բարոյական, և—մասնաւոր կէտիս մէջ—լեզուական :

Անշատուժը այնքան կը մեծնայ երկու դասակարգերուն միջև, ձգտումները այնքան կը տարբերին իրարմէ, կեանքի ու դաստիարակութեան պայմանները այնքան կ'այլազանին, որ կը հասնի վերջապէս օր մը՝ ուր ազնուականը և ժողովրդականը չեն այլ ևս հասկնար իրարու միտքը, լեզուն : Օտար

համայնքներու վերաբերող աս ընդհանուր տեսութեանս նպատակն է ուշադրութիւն հրաւիրել ան մեծ պայքարին վրայ՝ զոր անձայն յամառութեամբ իրարու դէմ կը մղեն ազնուական, այսինքն սկսեակի գրագէտի լեզուն, և փողոցի լեզուն, այսինքն ժողովրդինը, գործի մարդունը :

Լեզուներու պատմութենէն քաղուած երկու նշանաւոր դէպքերու վրայ հիմնուելով, կարելի է վերածել պարզ բանաձեւերու՝ դիտուած ստոյգ եղելութիւնները . այսինքն .

Ա.—Ազնուական և ժողովրդի լեզուններուն պայքարէն ծագած գրականութեան մէջ՝ ժողովրդի լեզուն համեմատութիւնը ուղիղ կերպով կ'աճի գրողին տգիտութեան հետ : Բ.—Ռամիկին լեզուն, զոր գիտնենք կ'արհամարեն, կրնայ ժողովրդին սովորական լեզուն օժանդակութեամբը—պարագային համեմատ—մահացու հարուածը տալ ազնուական լեզուն :

Լատիներէնին աղաւաղումը և դադլիերէնին ծնունդը երկու նշանաւոր լեզուական երեւոյթներ են՝ որոնց վրայ կ'արժէ ծանրանալ : Ասով պիտի մեկնուին վերոյշեալ երկու կանոնները :

Իր տիրապետութեան դարերուն մէջ՝

Հռոմ անկարող եղաւ մտցնել իր պաշտօնական լեզուն—լատիներէնը—յունախօս երկիրներու մէջ, որովհետեւ յունական հանճարը գերազոյն էր:

Հակառակը՝ արեւմուտքէն յաղթուած Կալլիացիք (Gauls) նետուեցան Հռոմացիացոց բազուկներուն մէջ: Կեանքի պէտքերը, փառասիրութիւնը, գործերը ինչպէս և հաճոյքները, հանրային պաշտօնները, բոլորն ալ ստիպեցին Կալլիացիին՝ ընդունելու յաղթողին լեզուն, մատենագրութիւնը, բարքերը: Անվիճելի է թէ լատիներէնը շուտով եղաւ հոն Կալլիական աղնուապետութեան, հանրային պաշտօնականներուն, վաճառականներուն սիրելի լեզուն:

Հոն՝ լատիներէնը յաղթեց, բայց ապականեցաւ իր յաղթանակովն իսկ: Չորս դար բարբարոններու գաւառաբարբառներու հետ խառնակութեամբ ապրելէ ետքը, լատիներէնը չէր մնացած անպատիժ, ըրած էր մեծ գոհողութիւններ:

Անարատ լատինականութեան կեդրոնն իսկ, Հռոմի մէջ, երկու տեսակ լատիներէն կը գիտուէր, ամէն ատեն, երկու մասնաւոր բարբառներ մայր լեզուն, որոնցմէ մէկը՝ յունարէնի ուսմամբը մշակուած, յունարէնի վրայ պատուաստուած, որ վերջապէս եղաւ ներդաշնակ և վայելուչ լատիներէնը, դասական լատիներէնը: Միւսը՝ կոշտ ու գոռահիկ մնացած, հին Լատինի լատիներէնը—*ous* և սապիմ բարբառներու մօտ ազդական—պահեց իր բնագաւառին ճաշակը և հին իտալական համբ: Ժողովուրդը, հողագործը կը խօսէին այս լեզուն, և ամէն անոնք՝ որոնք տղէտ էին յունարէնին:

Այս կրկին լատինականութիւնները միանգամայն ասպատակեցին Կալլիոյ վրայ և տարածուեցան ամէն ուղղութեամբ: Գրական լատիներէնը մտաւ դպրոցներու միջոցաւ, գիրքերով, լրագիրներով, թատրոններով և բարձրագոյն դասակարգի մարդերու խօսակցութեամբը: Ժողովրդական լատիներէնին ալ չպակսեցան տարածողներ, նաւաստի, վաճառական, գաղթական. բոլոր ասոնց անհամար ամբողջ որ կը նորոգուէր անդադար և գործունէութեան մէջ էր անդադար, կը

սիրուէր զայն պողոտաներուն վրայ, առուտուրի բոլոր հրապարակներուն մէջ:

Գերմանիկ խառնուրդէն առաջ՝ բարձրագոյն դասակարգը օրինակ կ'առնէր գիրքերու և դպրոցներու լատիներէնէն. ժողովուրդը կը խօսէր գոռահիկ լատիներէնը, Կալլիերէնի մնացորդով մը համեմատուած: Հինգերորդ դարուն՝ մտաւ շփոթութեան նոր տարր մը, գերմանիկ (*tudesque*) տարրը:

Կարելի չէ, սահմանափակ յօդուածի մը մէջ, աւելի երկայն վկայութիւններ քաղել պատմութենէն:

Բայց, ինչ որ մասնաւորապէս հետաքրքրական է, նոր գաղղիներէնին կազմութեանը տեսակէտով, անկումն է դրական լատիներէնին:

Գրական լատիներէնը բոլորովին կ'աղաւաղուի, և անոնք որ դեռ կը փորձեն զայն գրել, այսինքն՝ նօտարները, կղերականները, տգէտներ են այլ ևս, և չեն սորված անոր օրէնքները, որպէս զի կարենային պահպանել լատիներէնին աւանդութիւնը:

Միւս կողմէն՝ այս մարդիկ կ'ատեն ժողովրդին լատիներէնը և չեն ուզեր գործածել զայն. որով կը յօրինուի կորնայ մը (*jargon*), որ ոչ դրական և ոչ ժողովրդի լատիներէնին կը նմանի: Տարօրինակ կերպով կը խառնուին աս երկու տարրերը, և ժողովրդի լեզուն համեմատութիւնը ուղիղ կերպով կ'աճի գրողին *sqhsութեանը* հետ: Աղաւաղուած աս լատիներէնն է որ կը կոչուի *bas latin*, ստորին լատիներէն:

Գալով մասնաւորապէս Գաղղիներէնին ծննդեանը և կազմակերպութեանը խնդրոյն՝ անհրաժեշտ է միտ դնել որ ստորին լատիներէնը չէ բնաւ ազդած արդի գաղղիներէնին ծաղման և կերպարանաւորութեանը վրայ: Ան՝ աղղուեցաւ ժողովրդային լատիներէնէն, այսինքն անկէ՝ զոր ռամիկը կը խօսէր և զոր գիսունքերը կ'արհամարհէին: Ան արտադրեց գաղղիերէն լեզուն:

Իբր ընդհանուր գաղափար աստիճանական կը նկատուի ցուցնելու համար թէ, պարագային համեմատ, տեղային կամ օտար աղղեցութիւններու տակ, կրնայ պատահիլ

որ ազնուական լեզուն տեղի տայ գոեհիկ լեզուին, երբ առաջինը կը դադարի գլխաւորաբար խօսուելի, երբ անկարող կ'ըլլայ հետեւելու ժողովրդին աճեցուն պէտքերուն, բռնելու բարձր և օգտակար դիրք՝ գիտութեան, արուեստի, գեղարուեստի մէջ. երբ անոր ուսմունքը կը կարօտի երկար տարիներու, կ'ընծայէ տարօրինակ դժուարութիւններ:

Մինչ այս, մինչ այն, ժողովուրդը պէտք ունի դիւրութեամբ հասկընալու իր նմանին կամ դրացիին լեզուն. կը կարօտի գիտութեան և զարգացման, և իր բուն տենդին մէջ, առանց վարանման կ'ընտրէ այն դործիքը որ ամէնէն դիւրին գործածելին է, է՛ն ձկունն է, է՛ն ատակն է կատարելագործուելու:

Թրքահայ աշխարհաբարը հետեւեցաւ վաճառականին, սեղանաւորին, արուեստաւորին, պահանջումներուն. և աս կարգի մարդկանց հոծ բազմութիւնը յարած մնաց իր լեզուն, չնորհիւ մեր աշխարհաբարին:

Նշանակութեան արժանի ազդեցութիւն մըն ալ դիտուեցաւ Պոլսեկան հրապարակագրութեան մէջ՝ որուն մասնակցողները երբեմն ազիտութեամբ, երբեմն թեթեւութեամբ, անարգեցին ու ծաղրեցին մեր հին լեզուն: Անշուշտ, պատճառն ան էր որ՝ անոնք բաւական ուսած չէին, կարենալ ճանչնալու, գնահատելու համար մեր գրաբարը, կարենալ շահագործելու համար անոր թագուն հարստութիւնները:

Բայց, պիտի կարենանք ըսել թէ, մեր մէջ, ժողովրդի լեզուն համեմատութիւնը ուղիղ կերպով կ'աճէր, քսնի տարիներ, գրողին sqhsութեա՞ր հետ գրաբարի մէջ: Հակադրեցութիւնը չուշացաւ:

Ուստի՝ այս պարագան չյարմարիր, ըսալս, բացարձակապէս մեր աշխարհիկ լեզուին՝ որ չունեցաւ ուրիշ ո և է աղբիւր գրաբարէն զատ: Գրաբարը չունեցաւ, իբր ոտիս, ռամիկ ան զօրեղ լեզուն՝ որ յաղթեց լատիներէնին: Մեր կորնայն մնաց անսուաղ, որովհետեւ զինքը չըջապատող դրացի լեզուններուն հետ չէր կրնար առնչութիւն կամ ազգակցութիւն (affinité) ունենալ, անանիլ

անոնց հիւթովը, տոկալ անոնց օժանդակութեամբ:

Միւս կողմէն—և աս՝ մեր աշխարհաբարին էն փոքր արժանիքը չէ—ամէն առթիւ բողոքեց իր հարադատութեանը վրայ կասկածողնէրուն դէմ. ցցուց և ապացուցուց թէ ինքը անհարադատ զաւակ չէր, այլ անառակ սղայ մը՝ որուն մայրը մեռած էր սղաբերքի ատեն, չգլխմանալով երկունքի ցաւերուն: Այսպէս, որք՝ ըայց հաւատարիմ իր մօրենական աւանդութիւններուն, նախանձախնդիր իր արեւակցութեանը, ան չսպառեց իր մօրմէն մնացած ինչքն ու ստացուածքը:

Մի՛ քննադատէք եթէ մեր աշխարհաբարը դեռ չստացաւ «մարդու երես ելլալու» կերպարանք, եթէ հագուստները տձև են ու անձաշակ: Անոր մօրը մնտուկներուն մէջ շատ գոհարներ կան, բանուած բաճկոններ, ժամացոյցի ոսկեղօծ շղթաներ, թանկագին քարերէ կոճակներ, ի՛նչ մուշտակներ, ի՛նչ վերարկուներ, բեհեզեայ ի՛նչ շապիկներ:

Բոլոր այս հարստութիւնները կան, պահուած են, գլխոնք: Բայց ոչ ոք մեզի կը ցուցնէ զանոնք. ոչ ոք կը ցուցադրէ զանոնք դիւրամատչելի պայմաններով՝ որպէս զի գոեհիկը տեսնէր, սորվէր առանց մեծ ծախքի, առանց ժամանակի կորուստի:

Մեր աշխարհաբարին կարծեցեալ ինամա կալները թերեւս կը սպասեն որ ան համի իր չափահասութեան տարիքին, որպէս զի իրենց համարատուութեանը ժամանակը գայ, Գովելի է այս մատակարարութիւնը, բաւ է որ մեր լեզուական դրամագլուխը աղէկ ձեռքերու յանձնուի, ամուլ չմնայ աւելի երկայնատեն, շահագործութիւնը ըլլայ աւելի խելատեն, աւելի գործնական, և բոլորովին համաձայն գիտութեան նորագոյն դրութիւններուն ու պահանջումներուն:

Հակառակ պարագային՝ մեր աշխարհաբարը պիտի չսպասէր իր չափահասութեանը, և պիտի պահանջէր իր emancipationը, որ մը, ժամանակէն առաջ:

Գ.Բ. ՄԱԼԽԱՍ

Վաղամեռ Տիկին Սաթենիկ Մսերեանի
համակրողները ու ծանօթները անգամ մըն
ալ վերարծարծուած պիտի զգան իրենց ցաւը՝
կարդալով այն հոգեցունց քերթուածը զոր
Վահան Մալէզեան կարդացած է իր քրոջ
դագաղին վրայ, յուղարկաւորութեան պա-
հուն: Այդ քերթուածը, որուն ձեռագիրը
առնելով շրկած են մեզ սգաւոր գրագէտին
բարեկամները, կը հրատարակենք Մասիսի
այս թիւին մէջ, ո՛չ միայն վերջին յարգանք
մը մատուցանելու համար մանկամարդ կնոջ
յիշատակին, այլ նաեւ իբրեւ բանաստեղծական
ղգայուն ու արիւրօրէն գեղեցիկ արտա-
գրութիւններէն մէկը Մովսէս Զեյնալի:

Զ Ո Ջ Ս Յ Ե Ս Ա Ս Ա Կ Ի Ն



Կը մեռնին մաքուր հոգիներն արդար,
Կը մեռնին՝ կեանքին մէջն իսկ խաբուսիկ,
Երագելով լմիւս տենչեր անկասար,
Մոռնալ ուղեյեն ժամերն վաղանցիկ:

Վաղանցիկ կեանքին ցաւով տոգորուն
Յուրս գաղափարեն յաւեւ սարսուղին,
Հոգիներն անդին՝ խորն երագներուն՝
Կը նային հեռուն, սուս կեանքեն անդին:

Օհ, դառն հիւծումով, տակաւ ամեն օր
Ազնիւ հոգիներն կը մարին մեղմիւ,
Տառապողները ըզգացմունքին խոր՝
Կ'ապրին մահուան մէջ յուզմունքներն անկեօր:

Հեռուն կը նային, խորն անուշներուն,
Քու հրեշտակի աչքերդ այլեւս փակ,
Յաւիտենի գոյն աչքերդ ցընորուն
Քու աչքերդ, ո՛վ էոյս, կը նային անյազ:

Ունայնութեան ծոցն ինկով գոյգ գոհար:
Աչքերդ պաշտելով՝ անոնց որ կ'ապրին,
Հոգիներուն մէջ պիտի նային յար
Նայուածքը մահու, սի՛ն, խո՛ր, եւ լո՛ին:

Ան՝ յամառ ու դառն, հոգիներուն մէջ
Սեւ տառ մը կ'ըլլայ, եւ մահուան սարսուռ
Կը սրսկէ յոյսերն ի վար դիւրաւեջ,
Մահու երգ՝ նայուածքդ մեռելի քափուր:

Կը մեռնին մաքուր հոգիներն, աւա՛ղ,
Եւ շատեց փուկդ ալ կը մեռնէր: հե՛գ կի՛ն,
Քանգի դալկահար հոգիները վաղ՝
Ըզգալ գիտնալուն համար կը մեռնին:

ՎԱՀԱՆ ՄԱԼԷԶԵԱՆ

ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

ՈՐՈՆՑՆ Է ԱԻԵՏԱՐԱՆԸ

Սրաի ազնուացումն ու մաքրութիւնը գեղապանց գործը կը կազմեն կրօնքին: Այս ճշմարտութիւնը էական հանգամանք կը նշկատուի ամէն կրօնքի: Այսուամենայնիւ, մարդկային կեանքին վրայ կրօնքներու ունեցած ազդեցութեան խորունկ քննութիւն մը պիտի կրնայ ցոյց տալ թէ քրիստոնէական կրօնքը գերազանցապէս կը պատկերացնէ իր վրայ հոգեւոր կրթութեան մը նշանակելի գործունէութիւնը ամէն ժամանակի համար:

Գրիստոնէական եկեղեցիին կազմակերպութեան առաջին օրերէն իսկ, ուր անոր հիմնադիրը Յիսուս՝ ազնիւ և միամիտ հոգեւորու կը վստահէր իր կրօնքին ծաւալման փափուկ գործը՝ յայտնի կ'երեւէր թէ որքան կարեւորութիւն ունէին անոր համար սեռն և սերտ հաւատքի մը ընդունակ սիրտերը, որոնք մարդկային ո՛ր և է կեղծուպատիր իմաստութեան մը ազդեցութեանը տակ չէին զեղծուած: Եւ առանց չափազանցութեան կարելի է ըսել նոյն իսկ թէ այդ կրօնքը թերեւս պիտի չունենար նոյն արագ ծաւալումն ու անօրինակ յաջողութիւնը երկրի վրայ, եթէ տարբեր ձեռքերու յանձնուած ըլլար ան:

Դիւրին է հասկնալ ուրեմն թէ ոյժ մը կայ, զլիաւորաբար սրտին ոյժը որ իր կոյս վիճակին մէջ երկնազդեցիկ բան մը ունի միշտ, մեծագոյն դժուարութիւններ հրաշալիօրէն յաղթահարելու մեքենականութեամբ մը լարուած: Այդ դժուարութիւնը կրնդարձակուի և կը ներգործէ գերազանց գիրքին՝ Աւետարանին չնորհիւ միայն: Սխալ մը պիտի ըլլար ուրեմն խորհիլ թէ մարդ առանց անոր ազդեցութեան պիտի կրնար ինքնին վճիռ և մաքուր սիրտ մը ոգեւորել իր կուրծքին ներքեւ, իր մտքին ոյժերուն միայն ապաւինելով: Վասն զի կը տեսնենք շատ անգամներ թէ գիրքերու մէջ թաղուած միտքերը չեն կրնար մաքուր և ազնիւ սիրտ մը չինել:

Խնդիր է գիտնալ սակայն թէ ամէն մարդ առ հասարակ կրնա՞յ օգտուիլ Աւետարանէն ու անոր բարի ներշնչումներուն անձնամասոյց ըլլալ անպայման կերպով. ո՛չ երբեք. վասն զի անոնք՝ որ ի բնէ չար են ու նենգամիտ խաբէութեամբ պղտորուած, անհնար է որ խորապէս ազդուին Աւետարանէն ու անոր շունչովը ազնուանան: Խնչ պիտի ըլլայ ուրեմն, պիտի հարցուի, այդ պիտիներուն համար՝ Աւետարանին գործը. ո՛չինչ. վասն զի Աւետարանը անոնց միայն կը քարոզուի, Գրիստոսի հոգին անոնց հոգիներուն մէջ միայն կրնայ թափանցել, լաւագոյնին ժառանգութիւնը վերջապէս անոնց իրաւունքն է միայն, որոնք բարութեամբ և անմեղութեամբ սերտ յօժուարութիւն մը ցոյց կու տան մտադիւր ընդունելու համար զանիկա իրենց մէջ. ուստի անոնք պէտք է շարունակ կարգան զանիկա, աւելի ևս ազնուացնելու համար իրենց ներքինն ու կեանքը, վասն զի Աւետարանը բարիներունն է միայն:

ԱՐՄԱՏ

ԵՂԻՇԷ ՎՐԴ.

ՎԱՐՈՐԸ

Թոյլ չըփակիմ կապոյսիմ մէջ սնդուսէ,
Ու մարմինիմ օջազիծիմ վրայ կոր,
Ժանեակն է որ ձիւնն իր ծալքիմ կը սփռէ,
Գրգռս կուրծքիմ ձիւնովմ ամբիծ ու աղուոր:

Ձիւնասպիսակ հակսիմ վրայ իր խոհուն,
Մազիմ ոսկին շուշանի սիւրս է կարծես,
Իր դիւքովի անջալոյզ աչհերուն
Կոպմ՝ հակած է բռնունմերուն քելին պէս:

Սիրահարի ձօն մը քերես գողունի,
Կամ պատահմամբ ճամբան փաղուած փափկօրէն,
Վաւր մը որ երբ որ օրբունքիմ մօտ տանի,
Իրար ձուլուած՝ ծիրանի մը կը կազմեն:

Յափեցակուած կը ծրծէ զայն լիաշուրթ,
Ծոյլ, խելայեղ արբուութիւնով սարսուռն,
Գիրգ համբոյրով մ'ըմբռնելով անյագուրդ,
Զինքն կարթող ծաղկիմ հոգիմ, բոյր համբուն:

ԱՌՄԱՆ, ՍԻՂՎԻՍԳԻՐ

ԹԱՐԴՄ.ՄԱՌԻ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ՄԵԾ ՀԱՄԲԱԻ ՓՈՔՐ ՀՈԳԻ

(ՆՈՐԱՎԷՊ)

Ա.

Ինչպէս կրցեր էր տիրանալ համբաւի մը որ լինէր իբր է՛ն պարկեշտ և առաքինի կինը ծանօցուցած էր իր ծանօթներուն: Ուսկից էր այդ բարոյական վարկը. ապահովագէտ ո՛չ ոք կրցեր էր հասկնալ և Տիկին Մեխակեան, հարուստ սեղանաւորին կինը, հակառակ իր հրապուրիչ ու մանկամարդ գեղեցկութեանը, իր չնորալի ու հրայրքոտ շարժումներուն, կը մնար մէկը այն անմատչելի և դժուարահաս կիներէն որոնց վրայ այնքան աղէկ գիտեն պարծենալ յիսունը անցուկ տեսնու միամիտ ամուսինները: Մնաց որ, երբևոյթէն կամ ներքնապէս, Տիկին Մեխակեան սովորական կին մը չէր եղած իր միջավայրին մէջ. էրիկ մարդիկ կը ջանային խօսիլ իր հետ լեզուի այն տեսակ մը նրբութեամբ որ անմիջապէս կը մատեն մեծամոլ տանտիրուհիի մը պահանջած յարգանքը իր տունը եկողներէն. իսկ կիները, ինչպէս միշտ, չէին դադրեր բամբասելէ ու քննադատելէ զինքը, միևեւրոյն ատեն հաճոյք զգալ ձեւայնելով անոր խօսիլը լսելէ, անոր Պէկէէն ապսպրուած շրջադիտարին և Անտէլէն հազնուած գլխարկին վրայ հիւսնալէ, անոր նստուածքը կամ ոտքը ոտքին վրայ դնելուն կերպը ուսումնասիրելէ: Ըսել չէ՛ թէ իր բարեկամուհիները, ամենքն ալ իրենց կարգին լաւագոյն ընկերութիւններու մէջ մտած խօսուն պուպրիկներ, գուրկ ըլլային մտաւորական կամ ֆիզիքական յատկութիւններէ. բայց չգիտցուիր ինչո՞ւ, Տիկին Մեխակեան իր շուրջիններուն կը ներշնչէր անսնկ վստահութիւն մը զոր ամէն ոք պիտի փորձէր սլանել երկարօրէն, թաշկինակի մը պէս որ անուշահոտութեան մէջ թաթխուած ըլլար:

Իրաւ ալ, Տիկին Մեխակեան սովորած էր կեղծել սալօնի այն նուրբ քաղաքականու-

թիւնը զոր կարելի պիտի չըլլար ձեռք ձգել միմիայն էրկանը դրամին չնորհիւ: Իր մէջը ունենալ կը թուէր ինքնածին ոյժ մը որ կը հաւասարեցնէր զինքը այդ դարավերջիկ յատկութիւնը ունեցող բարձր կիներուն: Սիրոյ, հրապուրանքի նետը խրկելէ վերջ էրիկ մարդուն, չէր ներքեր որ փոխարէնը ընդունած ատեն դպչի իր մէկ կողմին, գիտնալով ճարտարօրէն գործածել բարոյականի վահանը՝ այդ կարգի թունաւոր սլաքներու դէմ: Ասանկով, կարող եղած էր տեսակ մը կանացի prestige ստեղծել ինքզինքին: Համարձակախօսութիւնը կնկան մը համար ներքի կը նկատէր, չխրաչելով բնաւ սալօնի սուտ ու բուտ շաղակրատութիւններէն և ախորժելով այն կարգ մը հացկառնակ ամուրիներէն որոնք իր քղացքներուն շուրջը կը գեղեցնէին: Յետոյ, Բըթի-Շանի իր գեղաչէն տան սալօնը կը բանար բոլոր անոնց որոնք անուն մը ունին Բերաի ընտանեկան շրջանակներուն մէջ: Բրիդգիքօէն վերադառնալուն պէս, հոկտեմբերի վերջերը իր գիշերային ընդունելութիւնները կը սկսէր և անգամ մըն ալ, Բարեկենդանի մօտ իր մեծ երեկոյթը կուտար իր ճոխ պիւֆէովը, առատ չամբանեայովը զոր լայնօրէն վճարելու չէր քաշուեր Մեխակեան: Պարահանդէսներու մէջ իր ներկայութիւնը զգալի կ'ըլլար. էրիկ մարդիկ կը փութային քովը, իր հոլանի ուսերը դիտելու և կիները կուգային քննելու համար անոր շրջադիտարը որ անպատճառ է՛ն ծանրազինը, միանգամայն է՛ն վայելուչը եղած կ'ըլլար, թէև միւս կողմէ ալ չար լեղունքը առիթը չէին փախցնէր իր վրայ խօսելու ամէն անգամ որ սովորականէն աւելի թոյլտուութեամբ վարուէր երիտասարդի մը հետ կամ թե տար անոր, պարասորհին շրջանը ընելու համար:

Ինչ որ ալ ըլլար սակայն, Տիկին Մեխակեան չուտով ձեւի գալիք խմորներէն տարբեր բան մը նկատուած կը մնար միշտ, իր համբաւին կառչած, առաջ քաշելով ընկերական կեանքի վրայ ունեցած իր ըմբռնումը ու համոզումը: Ինքը աւելի կը խորչէր այն կիներէն որոնք ամէն հաճոյքէ, ցոյցէ խոյս կուտան՝ պարզապէս իրենց ամուսին

հաւատարիմ սիրտ մը ունենալնին կեղծելու համար, թէեւ ներքնապէս քայքայուած բարոյական մը ու աղտոտած մարմին մը ունեցած ըլլան: Կնոջ մը սլաշտօնը, բոլոր էրիկ մարդոց հաճելի ըլլալուն, անոնց հետ ազատօրէն և առանց կանխամտածութեան խօսիլ գիտնալուն մէջն է, կը վարդապետէր Տիկին Մեխակեան, և այսպէս ըսելով հոգ չէր ընել բնաւ իր շուրջը տեղի ունեցող չարախօսութիւններուն որոնք իրեն համար աշխարհիկ կեանքի պահանջումներ էին լոկ, անկապ ու չմտածուած բաներ վերջապէս, կարող զանոնք իր փէշովը ցրուելու: Գարնան իրիկունները, իր սովորական պտոյտը ըրած ատեն, եթէ հանդիպէր տանը բարեկամ էրիկ մարդու մը, առանց վարանումի իր կառքը կը հրաւիրէր զայն և մէկտեղ կը պտտցնէր յաճախ:

Բ.

Բայց որքան որ երեւոյթէն պարկեշտ՝ նոյնքան ալ ներքնապէս խորամանկ ու իր սրտին պահանջումներուն բռնապետի կին մըն էր Սօֆի:

Իր տունը եկող էրիկ մարդոց մէջէն Սալէմեանին աւելի կը հաւնէր, անոր ուղիղ վարմունքը ու բարեկիրթ շարժումները գնահատելով: Սալէմեան, երսունըինգի մօտ կորովի երիտասարդ մը, կը զգար իր վայելուչ հասակին ու գեղեցիկ պէսերուն ազդեցութիւնը կիներուն վրայ և այդ ինքնաշխատահոթիւնը, փորձառաքար արմատացած ներսիւնին, կը բաւէր իրեն որ անոնց ամէնուն հետ սիրաբանէ հաւասարապէս, բայց առանց սեթեւեթի, ճարպիկօրէն ու վերապահութեամբ: Իր ծանօթութիւնը Տիկին Մեխակեանի հետ՝ վաղեմի բան մը չէր: Ամառը, Կղզին, պանդոկին մէջ՝ ներկայացուած, առիթը ունեցեր էին մօտէն ճանչնալու զիրար և մտերմանալու այնքան որքան կը ներուի գիւղի մը մէջ ուր բամբասանքին բոլորքը կայ: Սօֆի չէր վարանած չահեկան և համակրելի գտնել Սալէմեանի անձը, թէեւ այս վերջինը լսած ըլլար արդէն Տիկին Մեխակեանի համբաւը և անոր գեղեցկութեան վրայ հիացած՝ պատահական հանդիպումներու մէջ:

Գիշեր մը, լուսնի լուսով, Մեխակեան և ընկերութիւն—խել մը պանդոկի ծանօթներ—բերանիոխ զուարճութիւն մը ընելու մտք աւանակով պտոյտի ելան: Տեսարանը չահեկան էր ու միանգամայն կատակերգական: Բարի անասուններուն ոստոստուն ու նեղ սիրտ քալուածքը, իշապաններուն անախորժ պոռչտուքը, կիներուն խնդալու, էրիկ մարդոց երգելու ձայները, իրարու մէջ եղած անախորժ կատակները, բոլոր ասոնք իրար խառնուած, կը կազմէին ժխոր մը որ պահ մը կուգար կը խռովէր բանաստեղծական ու խորհրդաւոր լուծիւնը անտառին: Կարծես, լուսինն ալ իր ածիւլուած փայլուն դէմքը ամբողջովին դուրս հանած կապոյտին մէջէն, խնդալով կը դիտէր զուարճասէրներու խմբակին այս խօլ արշաւը:

Մեխակեանի կինը ու Սալէմեան, միևնրէն հեռու, քով քովի կը քալեցնէին կենդանիները, խօսակցելով, սիրաբանելով և մոռնալով զիրենք չըջապատող խմբակին զուարճութիւնը և անախորժ կատակները: Բայց հագիւ թէ խմբակը անցած անհետացած էր Տիասգէլօի գարեջրատան քովէն, Սօֆի կեցնել ուզեց կենդանին:

—Ա՛լ յոգնեցայ նստելէն, կ'ըսէր Սալէմեանին, քիչ մըն ալ քալենք:

Երկուքն ալ վար իջան և սկսան յառաջանալ մանր քայլերով, պահ մը լուռ մնալով գեղեցիկ գիշերուան մը տպաւորութեանը տակ երազացնոր և ականջ տալով հետըզհետէ հեռացող անհետացող ձայներուն: Սալէմեանի մէջ սկսած էր խայտալ յանկարծ պարծանքը էրիկ մարդու մը որուն ցանկացուած կին մը կը վստահին և ժպտուն՝ կը փորձէր առիթէն օգուտ քաղել ճարպիկօրէն բանալու այն վարագոյրը զոր ատենէ մը ի վեր կը զգար իր և Սօֆիի միջև: Այն մտերմութիւնը զոր այդ մէկ քանի շաբթուան մէջ փոխանակած էին իրարու հետ, ապահովաբար Սօֆիէն սիրուած ըլլալու հաստատ համոզումը չէր սնուցանէր իր ներսիւնին: Բայց ինչ որ ալ ըլլար, սա բացորոշ էր թէ Սօֆի կ'ախորժէր Սալէմեանէն և այդ մտածումը կը բաւէր իրեն և աւելի՛ առաջ երթալու ոյժը կու տար հետզհետէ:

Մնաց որ Տիկին Մեխակեան իր պարկեշտ կնկան համբաւովը և ուրիշներուն ըսածին կամ մտածածին կարեւորութիւն չտուողի յատկութիւնովը չէր վարանած արդէն քաջալերելու Սալէմեանը, պանդոկին մէջ եղողներուն ներկայութեանը իսկ չուայլելով անոր հոգեկան կարգ մը վայելքներ որոնք տարբեր միջավայրի մը մէջ պարզ համակրական ցոյցերէ աւելի բան մը պիտի արժէին կիներուն աչքին և միւս էրիկ մարդիկը կատգեցնելու միայն պիտի կրնային ծառայել. բայց Սօֆին մօտէն ճանչցող մը չուտով կարեւորութիւն պիտի չտար եղածին և անվնաս գաբուիս մը պիտի նկատէր գայն: Գիշեր մը միայն, Տիկին Միլանեան, համեստ հարստութեան տէր սկիւրիչին կինը որ պանդոկին երկրասարդներէն կը չաջապատուէր յաճախ իր զուարճախօսութեանը և քանքատողի սովորութեանը պատճառաւ, Մեխակեանէն տեղեկութիւն ուղած էր Սալէմեանի վրայ:

— Բեք քիպար երիտասարդ է, պատասխանած էր միամտաբար Մեխակեան... Սօֆին մէկը պէտք է ելլեմք ըլլալու համար...

Եթէ այս պատասխանը ոչ ոք կը գոհացնէր, գոնէ Սօֆին համար ալ վնասակար չէր որքան ատեն որ Մեխակեան նոյն համոզումով մնար իր մօտին: Տիկին Մեխակեան գիտէր ատիկա և անոր համար էր որ բնաւ չէր սրտնեղած երբ, այդ գիշեր, առաջին անգամ ըլլալով մինակ զգաց ինքզինքը Սալէմեանին հետ անտառին մէջ ուր մտեր էին անդգալաբար, երկու սիրահարներու պէս:

— Ձեռ ուղեր որ գէշ գաղափար ունենաս վրաս, կ'ըսէր Սօֆի, թեւին տակ զգալով Սալէմեանին ձեռքը որ երես առած կատուի մը թաթին պէս գգուանքներու ապաստարան մը սկսած էր վնասուել հոն, ըրած յանդգնութիւնս ապացոյցը թող ըլլայ քեզի հաւար ունեցած համակրանքիս, բայց կը պահանջեմ որ գոհ ըլլաս այսչափով և ատիկէ աւելին չվնասուես եթէ կուզես որ բարեկամութիւնս տեւական ըլլայ...:

Ներքին յուզումով մը ըսուած այս մէկ քանի խօսքերը, Սօֆի լեզուին վրայ *énervigique* չեղաւ մը կառնէին, խռովելով Սալէմեանի հողին և կեցնելով ղինքը ճիշդ հոն

ուրիշ անդին վայելքներու վարդապոյն հորիզոնը կը պարզուէր իր աչքին:

Սալէմեանի տեղ ուրիշ մը պիտի վնասէր անշուշտ Սօֆիի այդ համառօտ աղբարարութեան որ ապահովապէս հրաւիրող բան մը չունէր իր մէջ. բայց ինքը, կնոջ քմահաճոյքներուն ու սքողուած զգացումներու եւ թակայ եղած մարդ, զգաց թէ Սօֆին հրապուրելու առիթը ուրիշ կերպով կրնար ներկայանալ իրեն:

Եւ պահ մը լուռ մնացին վայելելու համար անտառին գերազանցօրէն հրապուրիչ ու հրաշալի տեսարանը զոր լուսինը դիտէ պատրաստել սիրահարներուն համար: Ծառերը անշարժ, իրենց պէս յուզումէն քարայցած ըլլալ կը թուէին և ծովը, լուսաշող երկինքին տակ, հայելիի մը պէս կ'անդրադառնար, նուազը բերելով իրենց ջուրին մեղմազնօտ նուազը և սարսուռը անծանօթ երջանկութիւններու:

Ուրիշ խումբեր կանցնէին հիմա, անոնք ալ իրենց մասնաւոր նուազահանդէսը յօրինելով և ընդհատելով պահ մը իրենց կարօտալիր մտերմութիւնը:

— Մարդ չտեսած դառնանք, կ'ըսէր Սօֆի՝ Սալէմեանի թեւէն քաշելով, միւսներէն առաջ պանդոկ ըլլանք, կը վախնամ կոր...

Սալէմեան կը դժկամակէր, ապահովութիւն կուտար Սօֆին.

— Բայց վախնալու ի՞նչ կայ... հետք չեմ միթէ... կրնանք ըսել թէ իրենց սպասեցինք հոս...

Եւ յետոյ յուզմունքով, դողդողացող շըրթունքները Սօֆիի ականջին մօտեցուցած՝

— Ինչպէ՞ս կրնաս մինակ թողուլ զիս, անգամ մը որ քեզ սիրելու հաճոյքը տուիր ինծի... Ըսէ, դու ալ չե՞ս սիրեր զիս... Թո՞ղ որ երկարօրէն պահեմ ձեռքերդ ձեռքիս մէջ և ըսեմ քեզի դեռ ի՞նչ որ աչքերդ կը ներշնչեն ինծի...

Եւ Սալէմեան, ինքզինքէն ելած, հաղիւ թէ թեւովը Սօֆիի մէջքը գրկած, կը պատրաստուէր համբոյր մը քաղել անոր շրթունքներէն.

— Սըսթ... կուգան կոր, գոչեց Սօֆի ջլաղրդութեան և անտառէն դուրս խոյառաւ...

Գ.

Դեկտեմբերի մէջ, չորեքշաբթի օր մը, Սալէմեան այցելութիւն տուաւ Տիկին Մեխակեանի: Անտառին տեսակցութենէն ի վեր, իրենց մտերմական յարաբերութիւնը դադարած ըլլալ կ'երեւար, Սօֆի պաղ վարմունք մը ունեցած ըլլալով հանդէպ Սալէմեանի, իբր թէ անոր անփափկանկատ առաջարկութենէն վերաւորուած: Այս գաղտնիքը իրենց մէջ մնացած էր ցորչափ Սօֆի կրցեր էր հաւտացնել իր շուրջիններուն թէ այդ գիշեր յանկարծ անհանգիստ զգալով ինքզինքը, պէտք տեսած էր Սալէմեանի ընկերակցութեամբ պանդոկ վերադառնալ միւսներուն զուարթութիւնը չխանդարելու գիտաւորութեամբ:

Այս պատճառաբանութիւնը, կնոջ մը բերնին մէջ սովորական, մազի չափ չէր խախտած սակայն համարումը Մեխակեանի որ կը շարունակէր հաշտ աչքով նայիլ Սալէմեանին, իրենց Բերա վերադառնալէն վերջն ալ, երբ տեսաւ թէ Սօֆի պարզ հիւրի մը պէս սկսած էր ընդունիլ Սալէմեանը:

Տիկին Մեխակեան, առանձնատնակի մը մէջ, գանաբէին վրայ թուօրէն երկնցած կը խորհէր, երբ իմացուցին իրեն Սալէմեանի ներկայութիւնը:

—Անառակ տղոց ասանկ պատիժներ կուտան երբեմն կիները, ըսաւ Սօֆի երբ Սալէմեան ներս մտնելով կը մօտենար իր ձեռքը համբուրելու:

Եւ հազիւ թէ այս վերջինը կը պարտաւորուէր նստիլ աթոռի մը վրայ, Սօֆի, ժողատուն, աւելցուց:

—Ճիշդ հիմա ես ալ քու վրայ կը մօտեմ, գիտես որ ընդունելութեան օրն է այսօր, քիչ մը սուղ Տիկին Միքանեանը կար, շատ մը աւելորդ խօսքեր ըրաւ վրայ, բէք հազ չըրի չխտակը...

—Ամբաստանութիւն մը չէր անշուշտ ըրածը, յարկը Սալէմեան:

—Ատկէ աւելի գէշ բան մը թերեւս... Ի՞նչ կուղես որ չմտածեն ամուսին ունեցող կնոջ մը վրայ որ երկստասարդի մը հետ կը սիրաբանէ անտառին մէջ...

—Կամ թէ սալօնի մը մէջ, ընդմիջեց Սալէմեան, հետաքրքրուած Սօֆիի յայնու-

թիւններէն... Ի՞նչ տարբերութիւն կը գտնես անտառին մէջ սիրաբանող կնոջ մը և սալօնի մէջ սիրաբանող կնոջ մը միջև...

Սօֆի ճիշդ ժամանակին հասաւ պատասխանելու համար:

—Տարբերութիւնը սա է որ էրիկ մարդիկ աւելի գէշ կը վարուին երբ առանձին զրտնոյն կնոջ մը հետ, մինչդեռ աւելի փափկանկատ կ'ըլլան սալօնի մը մէջ...

Սալէմեան այլապէս, լուռ մնաց: Սօֆի իր խօսքին առաջ բերած անախորժ սպասւորութիւնը ջնջելու համար, ոտքի ելաւ և ոսկի չրջանակներով գեղեցիկ կեքիսօնի մը վրայէն լիքէօրի սրուակ մը վերցնելով, գաւաթ մը լեցուց և Սալէմեանի երկարեց զայն:

—Հայտէ՛, խմէ՛ տեսնեմ, հաշտունք... Երեսդ անգամ տեսնել չէի ուզէր կոր, բայց միտս չունի, կը ներեմ...

Սենեակին մէջ, արուեստով կահաւորուած, կը տիրէր բարձր վառարանէն տարածուող հեշտ տաքութիւն մը որ մերկ մարմնոյն վրայ ստացուած մուշտակի մը դգուանքը կուտար, հաճոյք կը պատճառէր Սալէմեանի, փափաքը տալով անոր երկարօրէն մնալու լայն թիկնաթուղին մէջ, գեղեցիկ ու անհուշ նստէս հրապուրիչ կնոջ մը հանդէպ, մեծարժէք գեղօրներով զարդարուած սենեակի մը պերճանքին տակ: Պատէն կախուած հաւկըթաձև մեծ հայելին մէջ Սօֆի կ'անդրադառնար, իր վայելուչ չրջադգեստին մէջ կահաւորուած մարմինին բոլոր բարթամութեամբը, կտուրի վրայ ճարտարօրէն նկարուած երազային ու բանաստեղծական դիրքով կնոջ մը պէս:

Սալէմեանի աչքերը չլացան այս հրաշալի dècorէն: Իր հոգեկան գինովութեան կուգար կը խառնուէր նաև գինովութիւնը մէկ քանի վայրկեան առաջ հանդարտօրէն խմուած ալքօլին որ իր երկստասարդ արիւնը կը մտրակէր հիմա: Կնոջական նախազգացումով մը, Սօֆի նշմարեց յանկարծական փոփոխութիւնը Սալէմեանի գիմարձերուն որոնք կը յայնսորոյէին անոր ներքին տագնապը ու արթնցող ջիղերուն սարսուռը: Գանաբէին անկիւնէն ուր նստած էր անփութօրէն, ոտքի ելաւ իսկոյն և դէպի գուռը յառաջանալով:

—Մարդ չեկած խահուէ մը խմենք, ըսաւ,
յանդիմանութիւնով լեցուն աչքերը սեւեռե-
լով Սալէմեանի վրայ:

Բայց այս վերջինը, ջղածգօրէն ոտքի ե-
լած էր միեւնոյն ատեն և ձայնի պաղատա-
գին չեղտով մը.

—Սօֆի...

Մեխակեանի կինը դէպի ետ ընկրկած էր
այն միջոցին որ մատը կը մօտեցնէր ելեկ-
տրական կոճակին, սուրճը ապսպրելու հա-
մար: Սալէմեանի ձայնը այնքան տարօրինակ
էր ու չարժումը այնքան վճռական, որ Սօֆի
վախցած էր անոր երեսը նայելէ և շուա-
րած, յանկարծակիի եկած, դուրս ելլե-
լու միջոցը կը վնասէր: Սալէմեան անգամ
մը սկսած՝ չէր ուզեր ընկրկած ըլլալու
երկիւղը ներշնչել Սօֆիի, և աչքերը վառ,
շրթունքները յուզումէն ու կիրքէն արիւնոտ,
կը պատրաստուէր իր թեւերուն մէջ աւնել
մանկամարդ կինը, երբ նոր հիւր մը ծանու-
ցանող զանգակին սուր ձայնը կեցուց զինքը
ամօթահար, գլուխը կուրծքին վրայ և թող
աւելով որ Սօֆի, գունատ, դուրս նետուի
սենեակէն:

Դ.

Մէկ քանի վայրկեան վերջ, սանդուխնե-
րէն վար իջած ատեն, Սալէմեան ամէն բան
վերջացած կը նկատէր իր և Սօֆիի միջև և
այս մտածումը այնքան գէշ ազդեց իրեն որ
փափաքը ունեցաւ կրկին վեր ելլելով լա-
ւագին ներողութիւն խնդրելու:

Փողոցին մէջ, հակառակ ցուրտին, վե-
րարկուն շատ եկաւ իրեն, այնքան կը նեղ-
ուէր արեան անկանոն շրջանի մը ազդեցու-
թեանը տակ:

Ամիսի մը չափ չտեսան զիրար: Մէկ քա-
նի անգամ մտադրութիւն ունեցաւ գրելու
Սօֆիին, ըսելու համար որ չի նեղանայ իրեն
դէմ և ընդունի զինքը առաջուան պէս. յե-
տոյ, ետ կեցաւ այդ գաղափարէն: Ըրածը
ինչ էր որ. ուրիշ կերպով կաթիլի էր միթէ
հրապուրել կիները: Կիրակի օր մը մինչև
Սօֆիի տան դրան առջև զնայ, բայց չհա-
մարձակելով ներս մտնել, այցեատմը ձգեց
դուռնէն և հեռացաւ: Այս քանը շարունա-
կեց մէկ երկու անգամ. մինչև տանը դրան

առաջը կուգար. բայց այդչափ. կը դառնուէր
կը մնար հոն, վախճալով որ ներս մտած ա-
տեն պղծած կ'ըլլայ պարկեշտութեան դիցու-
հին պարփակող այդ տաճարին սեմը:

Բայց որքա՛ն մեծ եղաւ իր զարմանքը
երբ փետրվարի առաւու մը, ստացաւ տոմս
մը որով Սօֆի կ'իմացնէր իրեն թէ,—«Ազատ
համարձակ զուարճանալու մոռք, այն ինչ
գիշեր, Սիմոնիաի պարահանդէսը պիտի եր-
թար, էրկանը հետ դիմակաւոր, և կը խնդ-
րէր որ ինքն ալ անպատճառ ներկայ ըլլայ
հոն»: Եւ յետ գրութիւնով մը Սօֆի չէր մոռ-
ցէր աւելցնելու թէ—«Էրիկ կ'նիկ սօմինօ հա-
գած պիտի ըլլային և թէ իրենը, դեղին աթ-
լագէ էր»:

Սալէմեանի առաջին մտածումը եղաւ
Սօֆիին տունը երթալ և եղածը հաստատել,
այնքա՛ն տարօրինակ թուած էր իրեն՝ անոր
այս փափաքը: Բայց վերջէն ետ կեցաւ այդ
որոշումէն: Մէկ քանի անգամ ևս կարդացեր
էր Սօֆիի նամակը և հետզհետէ համոզուած
անոր պարունակութենէն: Յետոյ յիշեց թէ
Սօֆիի ընդունելութեան օրը անցեր էր և մի՛
գուցէ գիշեր ատեն այցելելով, պատճառ ըլ-
լար որ ամուսինը կասկածի:

Չէր կրնար ըլլար որ Սօֆի՝ Մեխակեա-
նէն գաղտնի ընէր այս բանը: Ինչո՞ւ չէ:

Այս մտածումը գլխուն մէջ դառնուեցաւ
և կեցաւ մնաց հոն մէկ քանի օրեր, գգուե-
լով չոյելով իր էրիկ մարդու անախառու-
թիւնը և ներշնչելով իրեն խոստացուած վա-
յելքի մը բոլոր անուշութիւնները: Սօֆիի հա-
մար ունեցածը՝ մոլորեցնող, տառապեցնող
սէրը չէր. բայց ինչ որ ալ ըլլար, կը զգար
թէ անիկա ամիսներէ ի վեր եկած լիուլի
զրաւած էր իր երիտասարդի պարապ սիրտը,
այնքան որ, անոր հեռացումը անկէ՝ առանց
արիւնեղու չէ որ պիտի ըլլար: Այս նախազ-
գացումը բաւական տառապեցուցած էր Սա-
լէմեանը այն օրէն վերջ որ Սօֆիի տունէն
մեկնած էր, վախտուած ու լքուած սիրահարի
մը պէս:

Նստակը առած օրը կանուխ մեկնեցաւ
զրասնեակէն, կնոջ մը հետ ժամադրութիւն
ունեցողի մը նեղսիրտ վիճակին մէջ: Պարա-
հանդէսին գիշերը կուշանար կարծես: Օդը

սաստիկ ցուրտ էր և փափաքը ունեցաւ, տուն չգացած, աբէրիքի մը առնելու: Եանիի դարեջրատան քովերն էր. ներս մտաւ, Ֆեռնէք մը ապսպրեց, խմեց, մեքենաբար թղթատելով օրուան մէկ քանի լրագիր. յետոյ, չկրնալով երկարօրէն նստիլ, գլխարկը դրաւ և վերարկուն մուշտակ օձիքը վեր դարձուցած դուրս ելլելու վրայ էր գարեջրատունէն, երբ սրարչաւ անցնող կառքի մը մէջ նշմարուած գլուխ մը իր ուշադրութիւնը գրաւեց, կեցաւ յուզումով և տեսաւ արգարէն Սօֆին որ կրցածին չափ ծռած, կառքին պատուհանէն կը բարեւէր ձեռքովը:

Այդ վայրկեանէն իսկ, Սալէմեան իր նախկին զուարթ վիճակը վերստացաւ: Սօֆիի ժպիտը, զինքը տեսած և բարեւած ըլլալու հաճոյքին հետ, վայրկեանապէս մոռցուցած էր այն տխուր տպաւորութիւնը զոր ունեցեր էր Սօֆիէն բաժնուած օրէն ի վեր:

Այս անակնկալ հանդիպումը այնքան կենսատու բան մը ունէր իր մէջ որ Սալէմեան, յաջորդ մէկ քանի օրերն ալ աղէկ անցուց, աղէկ կերաւ, աղէկ քնացաւ. Սօֆին երազելով:

Վերջապէս պարահանդէսին գիշերը եկած էր. Բիկմալիոնէն նոր առնուած ձերմակ փողկապը ու ձեռնոցները գրպանին մէջ, տուն վերադարձաւ, լաւ ճաշ մը ընելով դուրսը, և կէս գիշերին մօտ, հագուած սքուած ներս կը մտնէր պարասարահէն:

Առաջին նայուածքով բան մը չտեսաւ: Օթեակներուն մեծ մասը պարապ էր: Դիմակաւորներու տարօրինակ և դժոխային կուտակում մը միայն կար մէջտեղը, վերէն թափուած նուագախումբի մը կոտորումը, որ աղբիւցութեանը տակ ցատկոտելով, լարուած խամաճիկներու պէս: Բաւական ատեն կար որ հասարակ պարահանդէսի մը ներկայ չէր եղած և այդ աղտոտ տեսարանը գէշ տպաւորութիւն մը ըրաւ վրան և չվայելեցուց Սօֆիին, որ իբր բարձրագի և նուրբ զգացումներ ունեցող կին, հաճոյք զգար այդ մըթնոտութեն: Տղայութեան օրերու մոռցուած բարեկամ մը զինքը կեցուցեր էր պահ մը քիչ մը հեռուն կեցող կնոջ մը վրայ բաներ

մը ըսելով իրեն, որոնց սակաֆն ականջ չկախեց Սալէմեան և հեռացաւ:

Բայց հազիւ թէ մէկ քանի քայլ յառաջեցեր էր, դեղին փայլուն տօմինօ հագած կին մը զոր չէր նշմարած, եկաւ և կեցուց զինքը. Սօֆին էր:

— Եկու՛ւր, ըսաւ, ամուսինս վերը լօճան է, չի տեսնէ մեզի...

Եւ առանց խօսելու, մէկտեղ վար իջան, առանձին սենեակ մը քաշուելու համար:

Սալէմեանի յուզումը այնքան մեծ էր որ հաւտալը չեկաւ եղածին: Բայց երբ Սօֆի դիմակը վար առաւ, փակել տալէ վերջ առանձնասենեկին դուռը, Սալէմեան չկրցաւ զսպել դառն ժպիտ մը որուն մէջ դարմանցում ալ կար, յուսախաբութիւն ալ:

— Երբեք ինչ չէիր յուսար այս բանը, հէ՛, կ'ըսէր Սօֆի ինդալով... զաբոխ մըն է բարեկամս... Կնոջ պարզ հետաքրքրութիւն մը: Եւ առանց դիմացինին խօսք տալու.

— Ընտրէ՛ր էդ էր է հագուուտս, աղէկ չէ... Սալէմեան մօտեցեր էր Սօֆիի և անոր ձեռքէն բռնած.

— Շա՛տ գեղեցիկ ես, Սօֆի, չեմ գիտեր թէ երա՞զ է տեսածս... բայց անկեղծօրէն ըսելով, երբեք չէի կարծեր որ ասանկ տեղ մը կրնաս հաճոյք զգալ...

— Բեզի տեսնելու համար ըրի, անմիտ, գիտնայիր թէ ո՞րքան կը տառապեցնես կոր զիս, ամիսներէ ի վեր... Ուրիշ ո՞ւր տեղ կրնայի վայելել եւ սիրել քեզ...

Եւ իր ցանկացող կնկան աչքերը արտառովոր փայլով մը սեւեռեցան Սալէմեանի վրայ:

Բայց այս վերջինը չկրցաւ խօսիլ: Վերը սրահին մէջ ցատկոտող, տախտակամածը ծեծող հարիւրաւոր աղտոտ ոտքեր՝ երկարօրէն երազի ու անուշահոտութեան մէջ մեծցուցած իր սէրը ջախջախելու ձգմելու վրայ ըլլալ կ'երեւնային և Սալէմեան, յուսահատական ակնարկով մը, զգաց թէ այդ աղուոր սէրը իրեն ներշնչող կինը, մէկէն, վար կ'իյնար, կը փշրուէր այն անմատչելի կարծուած պատուանդանէն ուր ինքը զետեղած էր զայն հազուադիւրս ու մեծարժէք առարկայի մը պէս: Միաքը բերաւ ամառը, անտառին մէջ,

լուսնի լուսով իր տեսակցութիւնը Սօֆիին հետ, իր յուզումնալից վայրկեանները, իր զգայուն մարդու գգուանքները, իր խար- խափանքները և անոր, պարկեշտ կնկան մեր- ժումը: Յիշեց, աղուոր կրակի մը ազդեցու- թեանը տակ, անոյշ երազանքի մը մէջ ար- թընցող իր սիրոյ արտայայտութիւնները, իր արտայայտանքները անմեղ համբոյրի մը հաճոյ- քին համար և Սօֆիի փախուստը, միշտ պար- կեշտ կնկան կեղծ մերժումը:

Այս մտածումները, վայրկենապէս դառն և յուսահատական, կը խուժէին հիմա սրտին մէջ, իր բարոյապէս խարուած էրիկ մարդու արժանապատուութիւնը վիրաւորելով և մաք- րելով ինչ որ կար հոն մնացած ներքնապէս գուհիի ու կեղծ կնոջ մը յիշատակէն:

Սալէմեան աչքերը դարձուց անգամ մը Սօֆիի: Ինչ, իր սիրել կարծած կի՞նն էր հի- մա սա դէմինը: Դիմակը հանած, ճակատէն կաթկթող և դէմքը աւրչտկած քրտինքը սըր- բելու վրայ, ցած ու աղառտ ցեղունով սե- նեկին, թուք ու մուրով նեխած այգ մըթ- նոլորտին մէջ, ակամայ բերնէն դուրս տա- լով արիւրաբար պարպուած պիւտի շողին, Սօֆի, այնքան դէշ դէմք մը առեր էր ար- դարեւ որ Սալէմեան, յուզումէն շնչահատ, ոտքի ելաւ:

Իր կարգին, Սօֆի, ինքն ալ ոտքի ելած, ամէն բան աչքը առած վայրադ կնոջ մը շար- ժումը ըրեր էր, կատաղի ու գրեթէ սպառ- նալիքով լեցուն նայուածքով մը ըսելով:

— Մի՛ երթար, կը սիրեմ, կուզեմ քեզի:

Բայց այս անգամ Սալէմեանն էր որ կը փախէր իրմէ:

ՏՈՒՆՈ

Ստացանք Ս. Դաւթեանի մէկ նոր հրատա- րակութիւնը, Ուղեցոյց, դասատուներու և ինքնադարգացման փափաղողներու համար անհրաժեշտ գիրք մը որ լուծումը կամ բա- նալին է «Երբօրդ վարժութիւն մանկանց» դասագրքին Հրահանգներուն որոնցմով մա- տաղ ուսանողին միտքը կը սրի, և նախնա- կան ծանօթութիւններ կը ստանայ իրագի- տութեան, մտամարդութեան, լեզուի, քե- րականութեան վրայ եւայլն:

Օր. Մառի Յովհաննէսեանի Թրքումները կ'արժանանայ, ֆրանսերէն կրկնակ թարգմա- նութիւններէ հտքը, դրարար թարգմանու- թեան մը զոր կատարած է Տիգրան Էֆ. Եէլ- քէնճեան: Այս առթիւ, բաղմահմուտ գրա- ռարագէտին կը նուիրենք առաջինը «Վայրկե- նական» ներու շարքի մը որ յաջորդաբար պիտի երեւնայ Մասիսի մէջ և ուր պիտի ուրուագծուին՝ գրականութեան, գեղար- ուեստի և հանրային կեանքի զանազան ճիւ- ղերու մէջ անուն ունեցող անձերու դէմքե- րէն դատ, համեստօրէն քողարկուած մնացող արժանիքի տէր անձերու, — ինչպէս այս ան- գամումներ, — կամ մոռցուածներու, մեկու- սացածներու դէմքեր, փոխն ի փոխ, ըլլա՞ն Պոլսոյ մէջ կամ դաւառներու մէջ, հին թէ՛ նոր:

ԹՐԹՐՍՈՒՆԷ



Ձոր ինչ ասելոց էր Սէր,
Եթէ գոյք նմա բարբառեւ ...

Եւ ես ծովուն գեղ երեսաց
Փրփրազարդիկ ձիւնապիսակ .
Հրապոյրք եւ ես հից իրաց
Խաղաղական՝ ջինջ՝ անապակ :

Գեղոյն անուրջ եւ ըղձական ,
Յաւերժութիւն եւ անհուն .
Եռանդն եւ փայլ արեգական ,
Թերթից վարդից բոյր ծաւալուն :

Բիւրդեայ տարուամ յիշատակաց ,
Սեռն անօտիկ եւ անվրկանդ .
Նրբից նրաղ ականդոեայ
Մարբեցուցիչ բով հեռախաւնդ :

Մըմունջ եւ ես աղօթական
Ի խորս հոգւոց սուրբ մաքրեցի .
Լուսմուտ եթեց ամբաւութեան
Կապոյսն եւ ես աննրմանի :

Թաղուն սերունմ արփեան լուսոյն
Եւ քրքրականն եւ հրմայից .
Լուռ դաւնակումն՝ անհիւքագոյն
Շուտանական շրջոյց ամբիծ :

ՈՒՐՈՒԱԳԻԾՆԵՐ

(ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ)

ՏԻՊՐԱՆ ԵՂՔԵՆՃԵԱՆ

Ոսկերիչներու շուկային աղմկալից անցքերէն մէկուն անկիւնը, բարձր ապակեղաւանի մը ետին սքողուած՝ հանդարտիկ դէմք մը, զոր մօտէն չի ճանչցողը կը շփոթէ այն հարիւրաւոր արուեստաւորներուն հետ որոնք օրն ի բուն ոսկիի ու աղամանդի հետ կը խաղան եւ հաղիւ իրիկունը թերթ մը աչքէ կ'անցունեն, առկէ աւելիին ո'չ փափաք ու ներնալով եւ ո'չ ալ ճաշակ: Եւ սակայն այս սակաւախօս, համեստ անձը՝ Տիպրան Եղէքէնճեան՝ Պոլսահայոց առաջին գրաբարագէտներէն մէկն է, եթէ ոչ առաջինը: Մեր մայր լեզուին թաղուն գանձերը, որոնց կ'ակնարկէ Գր. Մալխաս՝ իր այսօրուան յօդուածին մէջ՝ գաղտնիք մը չունին իրեն համար, եւ ինքը սերտած, պրպտած, ճանչցած է զանոնք այնքան խղճմտօրէն որքան Լուսարարապետ մը տեղեակ կ'ըլլայ Երուսաղէմի վանքին նկուզներուն մէջ գտնուող եկեղեցական թանկագին հուշիւններուն, — առանց զանոնք գործածել ուղեւ: Ուսկի'ց ամբարած է Մեղպոլեան վարժարանի այս նախկին սանը՝ գրաբարի հմուտութեան ահագին պաշարը, որուն կը միայնէ Քրանսերէնի ու անգլիէրէնի հիմնական ծանօթութիւն մը, գրականօրէն: Այս գաղտնիքին բանալին «ինքնաշխատութիւն» բառին մէջ կը կայանայ: Երսունը հաղիւ անցուկ, աւելի խարտեալ քան թուի, համակրելի դէմքով, բարեհամբոյր խօսակցութեամբ, այս հեղիկ երիտասարդը կեանքի մէջ երկու հաճոյք միայն կը գտնէ, կ'ըսեն իր սակաւաթիւ մտերիմները, ցորեկը՝ իր արուեստաւորի արկղիկին առջեւ, ու գիշերը՝ իր գրասեղանին առջեւ: Առանց «ոսկեղինիկ գրաբարեան» մը ըլլալու՝ ոսկեհանքի մը պէս շահագործել գիտէ մեր նախնեաց բարբառը, իր գրչին ծայրովը: Արձակ կամ ոտանաւոր, է'ն բարձր գրուածքը օտար հեղինակներու՝ խրթին ու անսխալ գը-

րաբարի կը վերածէ այնքան ճկունութեամբ ու հարազատ կերպով՝ որքան դիւրութեամբ պիտի խմբագրէր, վարժ օրագրող մը, պարզ լուր մը կամ համարատուութիւն մը: Puritain մը, բառին ոչ-կրօնային խմատով, աւելի բծախնդիր ոճերու եւ բառերու հարստ զատութեան քան ներդաշնակութեան, այս գրաբարագէտը կրնայ հեղինակաւոր վճիռ մը արձակել լեզուաբանական ո'ր եւ է բանալէճի մէջ... Եթէ իրեն դիմուի. վասն զի իր բնածին համեստութիւնը երբեք չէ քաջալերած զինքը՝ ինքնաբերաբար առաջ անցնելու:


Ստուար դէզ մը կաղմուլու են — կ'ենթադրուի — իր ձեռագիր երկասիրութիւնները, մեծ մասով թարգմանութիւններ, որոնք Լոյս աշխարհ չեն տեսած. հաղիւ տարին մէկ երկու անգամ կը յօժարի մեր այս կամ այն Գրական Հանդէսին յանձնել քանի մը տող բան, նրմոյ՜ մը՝ պատառիկ մը իր գրաբարէն, այն ալ դիպուածին բերմունքով, երբ խմբագրի մը քայլերը շեղելով իրենց սովորական ճամբէն՝ Ոսկերիչներու Շուկային ուղղութիւնը բռնեն ու այց մը տայ այս բազմահմուտ արհեստաւորին:

Եթէ օրին մէկը քմահաճոյքը ունենայ, — եթէ երբեք քմահաճոյք կրնայ ունենալ այս մեթոտիկ անձը, — Լրագրի մը յօդուած տալու, ապահովապէս գրաբար պիտի գրէ, վասն զի դպրոցէն ելլելէն ի վեր տող մը աշխարհաբար չէ գրած, ինչպէս Մկրտիչ Ա. Տէմեան տող մը արձակ չէ գրած իր բանաստեղծի կեանքին մէջ:

Գ.Ա.ՄԷՐ

ԳԵՐՄԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՁՄՐԱՆ ՄԱՂԹԱՆՔ



Ոստայնանիներու պղտիկ բնակարանները ձիւներուն մէջ պառկած են: Անոնցմէ իւրաքանչիւրը իր սպիտակ տանիքը ունի, իր սպիտակ կտուրը, սպիտակ գլխիկներ ցանկապատներուն վրայ, սպիտակ բոյսեր վարդի թփիկներուն մէջ, ամէն ինչ սպիտակ: Եւ

դեռ ձիւնը կը տեղայ, նուրբ ու բարակ ձիւնը, որ ամէն տեղ կ'երթայ ու կը նստի, պատուհաններուն անկիւնները, դռներու ձեղքուածներուն մէջ, պատուհանի փեղկերուն վերի եզերքներուն վրայ և պարտէզի դռներուն փականքներուն շուրջը: Երկինքէն միլիոնաւոր բիւրեղներով սպիտակ պատմուճան մը կ'իջնէ յամրաբար, որ բոլոր աղքատութիւնները, կարօտութիւնները ու փոքրութիւնները կը ծածկէ: Դիտողին աչքին՝ ձիւնը ծածկոյթ մըն է թշուառութեան վրայ ձգուած: Թո՛ղ այդպէս ալ համարուի, իբրեւ պատկեր մը ծածկուած մեղքին: Ան կը հանգչի, թողէք որ հանգչի: Լաւ է որ ձիւն ինկած է իր վրայ: Զիւնիւէն առաջ Պօհեմական այն լեռնային հողամասը աղտեղութեամբ լեցուն էր: Փողոցները, աղբիւրները, սանդուխները, ջրորդանները, տանիքները, ամէն ինչ աղտոտ, նիսած ու տխուր էին: Ու ահա՛ ձիւնը եկաւ փռուեցաւ, իբրեւ ճշմարիտ բարիք մը, ու սքօղեց բոլոր զաղքութիւնները և այն տեղին տուաւ փայլուն ու ժպտուն դէմք մը, ձմեռնային կուսութիւն մը, որ ամէն ինչ կերպարանափոխեց: Բայց եկէք հիմայ մարդերու միջավայրէն դուրս, դէպի դաշտը: Զիւն, միայն ձիւն, հազիւ ընդհատուած երբեմն ճամբաներու առանձնացած ծառերու մթադոյն բուններէն, լերկ թուփերէն ու սև ծղօաններէն: Բոլոր փոսերը ծածկուած են, բոլոր ակոսները լեցուած: Ինչ որ անհարթ էր, հարթ է ու յըղկուած:

Անտառին մէջ եղած ես: Ո՛վ կրնայ զայն նկարագրել, երբ ան իր սպիտակ դգեռաներն է հագած: Իր եզերքին կանգնած են հին, ծերացած բարձրները, պատկառոտ արծանները անտառին, որոնց բոլոր գագաթները կ'արծաթափայլին: Սպիտակ երակաւորուած են անոնք իրենց խորհողութեան ու բնութեան բոլոր դալարներուն մէջ և ձմրան գորշագոյն շունչէն հրաշալի չըջահիւսուած: Իրենց տարիքի խոցերուն մէջ ձիւնն է դրուած իբրեւ բուժիչ բամբակ: Արմատի տրցակներու հանգոյցներուն վրայ նստած է պաղատազին գրգող սպիտակ զանգուածը: Ինչպէս մենք մանուկները կը ծածկենք, ա՛յնպէս ալ ձիւնը

ծառերու մէջ պզտիկ թուփերը և մատաղ թեղօշները կը ծածկէ: Միայն պզտիկ ձերմակ գագաթներ կը յայտնեն, թէ հոտ ապրող բան մը ցարդ երազի մը մէջ կը հանգչի: Զմրան բովանդակ մեծվայելութիւնը սակայն բարձրաբերձ մայրիներուն քովն է: Ո՛չ Պրիւսէլի կամ Պրիւկի տանթէլները և ո՛չ ալ Մայսնի կամ Վէրսայլի յախճապակները ա՛յնքան քնքոյշ են ու նուրբ, ա՛յնքան վէտովէտուն, ծալծալ, փափկագոգ ու նախշուն, քան այդ գողարիկ ձեռուած ու կտրուած առաւօտեան չըջաղգեստը մայրիներուն: Մինչև երկինքին ծոցը աճած է իրենց բրգաձև մարմինը, շինուածք մը՝ որ հրեշտակներէն քանդակաղարդուած ըլլալ կը թուի: Եւ այսպէս կանգնած է, մայրի մայրիի քով, ամբողջ անտառ մը, լեցուն սպիտակ այլակերպութեամբ: Ո՛վ կրնայ անոր խաղաղիկ մենութեանը մէջէն անցնիլ, առանց խորապէս յուզուելու: Հոն արուեստագիտորէն կաշկանդուած է բնութիւնը. սիգանք, արութիւն և ոյժ մէկ քանի չաքաթներու համար անշարժ բռնուած են, որպէս զի ան ամփոփուի, մաքրուի և լաւագոյն ուռճացման համար վերանորոգուի: Աստուած իբր մեծ կրթիչ մը կանցնի արարածներուն մէջէն ու լուութիւն կը պատուիրէ անոնց, որովհետև լուութիւնը հոգիները կը սրբագործէ, կը մաքրէ:

Հովիտին մէջ վտակը կը հոսի հեղասահ: Երկու եզերքներէն ապակեայ մարմիններ հակած են իր ալիքներուն մէջ: Զիկայ կնիւն մը, ծղօտ մը, թուլաշարժ ցօլուն մը, որ թափանցիկ, փայլուն, բիւրեղեայ շապիկ մը հագած չըլլայ: Ու ջուրներէն դէպի վեր կը բարձրանայ ապառաժոտ պարիսպը, պատառառուն, միշտ մեծաշուք, բայց ո՛չ մէկ տունն այնպէս յստակ ու ամփոփ ինչպէս ձմեռը: Ո՛չ մէկ գիծ կը կորսուի անկէ, որովհետև ամէն մէկ ակօս իր սպիտակ նկարը կը կրէ: Ա՛յնպէս ահա յստակ նկարադիր մը կը բարձրանայ աշխարհի մէջ: Այս ապառաժը ինքնին քարոզ մըն է, զոր մարդ պէտք է տեսնէ: Իր կողերուն վրայի ձիւնը պիտի հալի, բայց դիտողին քով պիտի մնայ միշտ տպաւորութիւնը, թէ ո՛րքան արժէք ունին թանձր ու թաւ գոյներ և սայրաստոր ու կուս

անկիւններ: Տե՛ս, թէ ի՛նչպէս հիմայ արեւը
կուգայ: Բոլոր այդ մակերեւոյթները ճաճան-
չող ու շողարձակ մարմիններու կը փոխէ ան:
Ինչ որ մեր մէջ սպիտակ, պայծառ ու ջինջ
է, հո՛ն է և այն տեղը, ուր երկնային լոյսը
կը ճառագայթէ:

ՅԵՐԵՐԻՎԱՆԻ ՆԱՌԻՄԱՆ

ՔԱՐԳՄ. ՇՐ. ԱՆԴՐԷԱՍԵԱՆ
Պետրին 26 մարտ 903

ԽՐԱԿՐԱԿԱՆ ՆՈՐԵՐ

ԿԻՐԻԿՈՅ Ս. ԿԱՌԱՂԻԱՍԱԸ

Օրաթերթերը կը շարունակեն հրատարա-
կել ընդարձակ թղթակցութիւններ՝ Տ. Տ.
Սահակ Կաթողիկոսին Ատանայի մէջ եղած
ջերմազին ընդունելութիւնը նկարագրող, մինչ
Ն. Ամենապատուութիւնը հասած է արդէն
Միս, ուրկից կը սպասուին նաև նկարագրա-
կան նամակներ: Օծումը պիտի կատարուի
Ջատիկէն երկու շաբաթ վերջը, և յաջորդ
կիրակին ալ՝ Ս. Միւռնոյի օրհնութիւնը: Բա-
ւական թիւով ընտանիքներ՝ Ատանայէն և
Կիլիկիոյ միւս թեմերէն՝ կը պատրաստուին
երթալ ներկայ գտնուիլ կրօնային այս մե-
ծաշուք հանդէսներուն: Կը յուսացուի որ
այս առթիւ բաւական նուէրներ ըլլան Սիւի
վանքին որ չա՛տ պէտք ունի չէն վիճակ մը
ստանալու: Կիլիկիոյ թեմականները՝ իրենք
աւելի մօտէն ծանօթ են այդ մայրավանքին
լքուած կացութեանը զոր ծաղկեցնելու և
բարեգործելու համար անզօր կը մնան Կա-
թողիկոսին ջանքերը՝ եթէ բարեպաշտ Ժո-
ղովուրդը իր դրամական նպաստովը չաջակ-
ցի: Եւ այս ակնկալութիւնը ի դերև չպիտի
կլէ անշուշտ, դատելով այն անկեղծ, տաք-
սիրտ վերաբերումէն զոր Մէրսինէն մինչև
Միս, ամէն քաղաքներու և գիւղերու մէջ,
ցոյց տրուեցաւ նորընտիր Հովուապետին:

ՆՐԱՆՍՏԱՂԷՍԻ ԳՈՐԾԵՐ

Յարութիւն էֆ. Գարամանեան, Պատ-
րիարքարանի աշխարհական պատուիրակը որ
Նրուսաղեմէն մինչև Ատանա ուղեկցեցաւ Կի-
լիկիոյ Ս. Կաթողիկոսին, և շաբաթէ մը հետէ
մայրաքաղաքս դարձած է, չա՛տ տխուր տը-

պաւորութիւն մը կրեր է Նրուսաղեմի վան-
քին մէջ պատահած ծանօթ միջնադէպներէն
որոնց ականատես եղեր է: Պէտք չենք տես-
նել անդրադառնալ այդ ցաւալի երկպառա-
կութիւններուն որոնց վրայ գրեցին արդէն
օրաթերթերը՝ ընդարձակօրէն: Այս երեքշաբ-
թի Պատրիարքարանէն Նրուսաղեմ՝ դրկուե-
ցան երկու պաշտօնագրեր, մէկը Տ. Յարու-
թիւն Ս. Պատրիարքին ուղղուած՝ որուն ա-
մէն աջակցութիւն կը խօստանան Ս. Պատ-
րիարքը ու Կեդր. Վարչութիւնը, և միւսը՝
այն 13 վարդապետներուն որոնք Վանքին
գործերուն վրայ դիտողադիր ուղղած էին:
Այս վերջին գրով, Ս. Պատրիարքը՝ Վարչա-
կան որոշմամբ՝ կը պախարակէ այդ 13 միա-
բաններուն անուղիղ վարմունքը, օրինական
չաւիղը կը ցուցնէ անոնց, և հաշուական
խնդրոյ մասին ալ կը յայտարարէ թէ ասօ-
րէն կերպով հաշիւ պահանջողները նոյն իսկ
պահանջումին իրաւունքը կը կորսնցնեն: Եր-
կու գրութեանց ալ նպատակն է ոյժ տալ
Տ. Յարութիւն Ս. Պատրիարք Հօր հեղինա-
կութեան:

Միւս կողմէ, կը յուսացուի որ Երէցեան
Տ. Գէորգ Սրբազանի մօտաւոր ուղեւորու-
թիւնը դէպի Նրուսաղեմ՝ իր բարեխար ազ-
դեցութիւնը ունենայ միաբանական այս վե-
ճերուն վրայ: Իրաւ է որ Վարչութեան կող-
մէ ո՛ր եւ է պաշտօն յանձնուած չէ Նրու-
սաղեմի Պատր. Փոխանորդին որ Տ. Յարու-
թիւն Պատրիարքի հաւանութեան գիրը ստա-
նալէ ետքը միայն պիտի տեսնէ իր կարճատե-
ճամբորդութեան պատրաստութիւնները, բայց
նոյն իսկ անպաշտօն հանգամանքով՝ Երէց-
եան Սրբազանի ներկայութիւնը իր նշանա-
կութիւնը ունի վանքին մէջ, այս միջոցիս
մանաւանդ: Ինքը՝ մեր ամէնէն սիրուած ե-
կեղեցականներէն մէկը՝ Նրուսաղեմի Միա-
բանութեան քով կը վայելէ նոյն յարգանքը
ու համակրանքը զոր կը վայելէ այս տեղ,
Վանքին օգուտը միայն իրեն նպատակակէտ
ունեցող անկեղծ միաբաններէն է և իր անձ-
նուիրութեան ապացոյցները տուած է ա-
մէն առթիւ, վարդապետութեան օրերէն: Իր
կատարեալ գիտակցութիւնը՝ Վանքին գործե-
րուն, իր կարող միաբանի prestige, իր

հոմոգլերի խօսուածքը, ամէն բան վերջապէս
երէցեան Սրբազանի անձին վրայ՝ վստահու-
թիւն կը ներշնչեն թէ նոյն իսկ իբրեւ պարզ
միաբան կամ ուխտաւոր եթէ երթայ Երու-
սաղէմ, հաշտարար ոգիով մը կրնայ հան-
դարանցնել միաբերը և վերջին ցաւալի
դէպքերուն թողած աննպատ տպաւորու-
թիւնը փարատելու աշխատիլ՝ ալեղարդ Պատ-
րիարքին հայրական աջակցութեամբը :

ՎԵՐԱՇԻՆՈՒԹԵԱՆ ՀԱՅԻՒ

Քաղ. ժողովը՝ իր չորեքշաբթի օրուան
նիստին մէջ նկատողութեան առնելով Տըն-
տեսական Խորհուրդին փեղեկագիրը՝ Ս.
Փրկչի Հիւանդանոցի վերաշինութեան հա-
շիւներու մասին, զորս ասկէ առաջ ներկա-
յացուցած էր Միքայէլ էֆ. Յակոբեան, հա-
սու եղաւ որ շինութեան ծախքերը կանոնա-
ւորապէս մատակարարուած և հաշիւներն ըստ
օրինի բռնուած էին. հետեւաբար հաստատեց
ներկայացուած հաշիւները, շնորհակալութիւն
յայտնելով բոլոր բարեսէր նուիրատուներուն,
շինութեան յանձնաժողովի անդամոց և ու-
րիշ աշխատողներուն, ու մասնաւորապէս Մի-
քայէլ էֆ. Յակոբեանի որ սկիզբէն մինչև
վերջը պէտք եղած հոգածութիւնը ցոյց տը-
ւաւ այս շինութեան գործին մէջ : Այս առ-
թիւ, Քաղ. ժողովը հարկ դատեց դարձեալ
որ շինութեան ծախքէն աւելցած 500 ոսկիի
գումարը յատկացուի իր նպատակին :

Յովսէփ-Իզմիրեանց Գրական Յանձնաժո-
ղովին ներկայացուած երկասիրութիւններուն
թիւը կը հասնի ասաներկութիւն որոնք ձեռն-
հաս քննիչներու պիտի զրկուին :

— Տիկին Սիրանոյշ՝ Թիֆլիզի մէջ իր ներ-
կայացմանց շաբթը աւարտելէ ետքը՝ դերա-
սանական սակաւաթիւ խումբով մը Գանձակ
ուղեւորեի և երեք ներկայացում տուեր է
որոնք մեծ յաջողութիւն գտեր են : Անխոնջ
դերասանուհին ստացիր է բազմաթիւ նու-
էրներ :

— Լեւոն էֆ. Քիրիշեան՝ որ ծանօթ է
օրաթերթերու և հանդէսներու նուիրած իր
աշխատակցութեամբը՝ դժբաղդութիւնը ու-

նեցաւ կորանցնելու իր մայրը, Տիկին Սրբուհի
Քիրիշեան, իր ընտանիքին ու զաւրներուն
բարեկեցութեան նուիրուած կին մը : Յու-
ղարկաւորութիւնը կատարուեցաւ չորեքշաբ-
թի օրը, Սամաթիոյ Ս. Գէորգ եկեղեցին,
ազդականներու և բարեկամներու ներկայու-
թեամբ : Մեր ցաւակցութիւնները կը յայտ-
նենք, այս տխուր առթիւ, Լեւոն էֆ. Քի-
րիշեանի :

— Բերայի Պարտուց հատուցման Յանձնա-
ժողովին պաշտօնը հնգամեայ տևողութեամբ
վերահաստատուեցաւ Վարչութեան կողմէ,
անոր անդամ կարգուելով նաև Խորասան-
ձեան Կարապետ էֆ.ն :

ԱՌՆԻՏՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԷՆ

Այս օրերս առեւտրական հրապարակի վը-
րայ երեւցաւ Շրջաբերական մը որ կը ծա-
նուցանէ թէ, Յ. Մ. Գ. Շամոտանձեան Վաճա-
ռատունը զոր ֆոլէքթիլ ընկերութեամբ կաղ-
մած էին Տեսարք Յեսու, Միհրան և Գրիգոր
Շամոտանձեան, 1903 յունուար 1էն լուծուած
ըլլալով՝ վերածուած է Մ. և Գ. ՇԱՄՏԱՆ-
ձԵԱՆ անունին : Այս լուծման ու վերակաղ-
մութեան շարժառիթն է Յեսու էֆ. ի մեկու-
սացումը գործէ, որով Միհրան էֆ. և Գրի-
գոր Խան Շամոտանձեան հիմնած են ֆոլէքթիլ
նոր Ընկերութիւն մը, ըստ առաջնոյն շարու-
նակելով իրենց գործառնութիւնները անխո-
փոխ :

Մայրաքաղաքիս այս առեւտրական հան-
րածանօթ տունը, որուն մասնաճիւղը կը
գտնուի Ֆիլիպէի մէջ, ո'չ միայն Թուրքիոյ՝
այլ և Եւրոպայի հրապարակներուն վրայ առաջ-
նակարգ համբաւ մը կը վայելէ իր ընդարձակ
գործառնութիւններով և իր պատուաւորու-
թեամբը և գլխաւորներէն մէկն է այն հաս-
տատութեանց որոնք պատիւ կը բերեն մեր
վաճառականութեան :

Արսօնաք Կ. Ս. Իիթիի ձճԱՆ

Տպագրութիւն ԱՐԵՆԵՒՔ Օրագրի



ՌՕՍԻԱ - ROSSIA



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ


ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈՍՏԻՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱՇՔ

Ընկերության գրամագուրը, ամբողջապէս վճարուած	10,667,667 ֆրանք
1901 տարւոյ մէջ գանձուած ապահովագրիներ ու տոկոս	54,000,000 »
Երաշխաւորութեան գումար	122,000,000 »
Ապահովագրեալներուն վճարուած գումար	249,400,000 »

Կեդրոնացեալի, Ղալաթիոյ Քարափին վրայ, Մախասան հին տեղը

Ընդհ. ՔԱՅԻՅ
Ա. ՀԻԻՐՄԻԻԶ

Ընդհ. Գործակալ
ԹԵՈՏՈՐ ՌԵԲԵՆ



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սեննետը, որովհետեւ լաւ մեքենայ մը անխիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ դէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է։

Բոլոր աշխարհ զիտէ թէ՛

ՍԻՆԿԷՐ

ՀԱՅԹԱՅԹԻԶ ԿԱՅՍ. ՊԱՐԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ստի ու ստի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին։

մեքենան լաւագոյնն է. որն մեքենան առնելն աւելի կատարելագործուածը. հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկէրի մեքենաները կը դնէ։

Սինկէրի մեքենաները կը ծախուին միմայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՄԱՍՆԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԲԵՐՍ.

1. Մեծ փողոց, Պօն Մառշէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿՍԻԱՍԹԱ.

1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամկէյին կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյաղլա, Թրամկէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՍԱԻՏՍԵՐ

Չարչը Պօյու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք ձեռք.

Կատարեալ Երաշխաւորութիւն։

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ։

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը։

ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

ԻՒՆԻՕՆ Ապահովագրական Ընկերութեան
Տնօրէնութիւնը 1/14 մարտէն սկսեալ իր
գրասենեակները փոխադրած է Պոլիս, Սուլ-
թան Համամ նորաշէն Քաթըրճի Օղլու
Բառաժը:

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵԾ-ՓՈՂՈՅ, Թ. 200

ԿԱԼԱԹԱ-ՍԷՐԱՅԻ ԼԻՍԷԻՆ ԴԷՄ

ԳԵ. ՆԵ. ՇԲ. օրերը առաւօտեան կանու-

խեն մինչեւ իրիկուան Ժ. 11^{1/2}

ԲԵ. ԴԵ. ՈՒՐ. օրերը 6են մինչեւ 11^{1/2}

Կիրակի օրերը ժամադրութեամբ



ՅՈՎԱԷՓ ԷՖ. ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵՂՐՈՒՆԻ)

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Մուղափէրիէ Հիւանդանոցին եւ
Պարսկական Վարժարանին

Բերա, Մեծ Փողոց, Թագսիմ, քիւ 61

Զրաւեան աբաւքման

Պալպալեան ամէն օր ահաւայի ամէն տե-
սակ հիւանդութիւններով տառապողները
կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Ներք-
շաբթի մինչեւ ժամը 5: Գիշերուան ո եւ է
ժամուռն կարելի է դիմել: Պալպալեան կ'ե-
րաշխաւորէ իր լեցուցած ու շինած ահա-
ները: Յորեկները ահաւայ քաշել տալու հա-
մար որոշ վարձք մը չկայ. քաշել տուողին
կամքէն կախեալ է:

Աղփասներուն ձրի

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՁ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Զ Ի Ի Ղ

Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ վիստք	240,000,000	Քր.
1899ին գանձուած ապահովագրին	19,500,000	»
Դրամագլուխ եւ պահեստ	105,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	18,000,000,000	»

Կ Ե Ն Ա Յ Զ Ի Ի Ղ

Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ վիստք	99,000,000	Քր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	150,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ
«Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաւխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆՐ
ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՁ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒ-
ԹԵԱՆ ԲՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեալ գիներով: Նպաստաւոր պայ-
մաններ անհատական կերպով աւելի զերազանց քան ուրիշ ո'ր եւ է ընկերութեան
պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի
ապահովագրութեան ԶԵՐԾ են այն վնասներէն եւ յուսալաւորութիւններէն, որոնց
կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բաւոյման (accumulation
des bénéfices) ՅՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դրութեամբ գործող ընկերութեանց կ'ապա-
հովագրուին:

Ընկերութեան իրամասունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելի Տօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համամ, Բասաժ Քաթըրճի Օղլու

Դորձակաւութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ